

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ  
ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

***Խորհրդի անդամներ՝***

- |              |  |
|--------------|--|
| Գ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար   |
| Հ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ   |
| Կ. Մինասյան  | ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ   |
| Ն. Երիցյան   | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ  |
| Ա. Հովսեփյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն      |
| Լ. Հակոբյան  | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն |

***Հրավիրվածներ՝***

- |              |   |
|--------------|---|
| Դ. Սարգսյան  | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար  |
| Պ. Սաֆարյան  | ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ   |
| Վ. Տերտերյան | ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ                                  |
| Գ. Մուրադյան | ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ  |
| Կ. Արեյան    | Երևանի քաղաքապետի տեղակալ   |
| Ա. Մուսայան  | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ |

- Ռ. Վարդանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
- Է. Ավետյան ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն

1. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում Երևան քաղաքի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցների մանրամասն ճարտարագիտական նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման խորհրդատուի ընտրության մրցույթի արդյունքների քննարկում և հաստատում

(Ա. Բադայան, Տ. Սարգսյան)

### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում Երևան քաղաքի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցների մանրամասն ճարտարագիտական նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման խորհրդատուի ընտրության մրցույթի արդյունքները.

2) հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բադայանին՝

ա. գնային առաջարկը ծրագրային ցուցանիշներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ սկսել բանակցությունները «Egis International» (Ֆրանսիա) կազմակերպության ներկայացուցիչների հետ,

բ. բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու (ծրագրային ցուցանիշներից բարձր լինելու) դեպքում հրաժարվել «Egis International» (Ֆրանսիա) կազմակերպության հետ պայմանագրի կնքումից և սկսել նոր բանակցություններ «EPTISA Servicios de Ingenieria, S.L» (Իսպանիա), «International Engineering Design» (Հայաստան) ասոցիացիայի հետ:

2. «EGIS International» (Ֆրանսիա) կազմակերպության հետ բանակցությունների վարում կազմակերպության կողմից առաջարկված գնի իջեցման պայմանի շուրջ

-----  
(Ա. Բաղայան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 2-րդի հարցը քննարկվեց 1-ին հարցի հետ մեկտեղ:**

3. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1»-ի իրականացման ժամանակացույցի հաստատում

-----  
(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1»-ի իրականացման ժամանակացույցը.

2) հանձնարարել Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Հակոբյանին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման ժամանակացույցով սահմանված ժամկետների պահպանման ուղղությամբ.

3) ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ սահմանել հսկողություն «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1»-ի իրականացման ժամանակացույցի կատարման ընթացքի նկատմամբ.

4) առաջարկել Երևանի քաղաքպետ Տ. Մարգարյանին Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման գործընթացում «Egis International» (Ֆրանսիա) կազմակերպության հետ ցանկացած խնդրի, ինչպես նաև հաստատված ժամանակացույցի խախտումների առաջացման պարագայում դրանց մասին զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

- 4. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 1-ի և տրանշ 2-ի 2012 թվականի ամփոփ բյուջեների և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2012 թվականի պահպանման ծախսերի նախահաշվի փոփոխված տարբերակների հաստատում

-----  
 (Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 1-ի և տրանշ 2-ի 2012 թվականի ամփոփ բյուջեների և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2012 թվականի պահպանման ծախսերի նախահաշվի փոփոխված տարբերակները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ  
 ՏԵՂԱԿԱԼ, ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱՐԱՐԻ  
 ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԽՈՐՀՐԴԻ  
 ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ